ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԿԱՀՈՒՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ նպատակով կազմակերպված <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/41-2>> ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված N <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/41-2>> պայմանագրում 2018 թվականի նոյեմբերի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Հիմք ընդունելով <<Սաքի>> ՍՊԸ-ի առաջարկությունը Պայմանագրի մատարման ժամկետը 20 օրացուցային օրով երկարացնելու վերաբերյալ, ղեկավարվելով և պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջներով՝ Կողմերը որոշել են պայմանագրի կատարման ժամկետի փոփոխության վերաբերյալ կնքել համաձայնագիր:

Փոփոխության նկարագրություն՝ Հիմք ընդունելով <<Սաքի>> ՍՊԸ-ի առաջարկությունը Պայմանագրի մատարման ժամկետը 20 օրացուցային օրով երկարացնելու վերաբերյալ, ղեկավարվելով և պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջներով՝ Կողմերը որոշել են պայմանագրի կատարման ժամկետի փոփոխության վերաբերյալ կնքել համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում՝ Փոփոխությունը կատարվել է՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները, ինչպես նաև՝ 2018 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված N <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/41-2>> պայմանագրի 8.4 և 8.5 կետերը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգման բաժին:

Հեռախոս՝ 010-511-788, 010-511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
09.10.2018թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԿԱՀՈՒՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
N <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/41-2>>
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 12 » նոյեմբերի 2018թ.

Դատական դեպարտամենտն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<ՍԱՔԻ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Կարապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 09.10.2018թ. կնքված N **<<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/41-2>>** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.4 և 8.5 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ-ի հրավերով նախատեսված թիվ 30 և 31 չափաբաժինների մասով մատակարարման ժամկետը սյունակում նշված «Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 20 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 40 օրացուցային օրվա ընթացքում» բառերով, այն է 07.12.2018թ. ներառյալ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3, ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011193019
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/ Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՍԱՔԻ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Գորիս, Անկախության 2/31
ՀՎՀՀ՝ 09213482
Հ/Հ՝ 1510019341900100
«Արարատբանկ» ԲԲԸ
Տնօրեն՝ Հ. Կարապետյան

/ստորագրություն/ Կ.Տ